Հավելված 7
ՀՀ ֆինանսների նախարարի << 02 >> օգոստոսի 2013թ.
թիվ 667-Ա հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀԵՑԴՇՀԱՊՁԲ-15/1 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2014 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 2 որոշմամբ – հրապարակվում է

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՀՀԵՑՊ-ՇՀԱՊՁԲ-15/1

Պատվիրատուն՝ <<Թիվ 8 Պոլիկլինիկա>> ՓԲԸ, որը գտնվում է Բաղրամյան 51ա հասցեում, ստորներկայացնում է <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/16 ծածկագրով հայտարարված ՀՀԵՑՊ-ՇՀԱՊՁԲ-15/1 ընթացակարգի հրավերի փոփոխության պատճառը – փոփոխության համառոտ նկարագրությունը:

Փոփոխության պատճառ: Տեխնիկական բնութագրում 3 և 26 չափաբաժինների տեխնիկական բնութագրի լրացում:

Փոփոխության նկարագրություն: 3. չափաբաժնի համար- ԷԿԳ ապարատը երեք կանալանի,

26. չափաբաժնի համար- Լատեքս, ոչ ստերիլ, չափսը՝ M,S:

Փոփոխության հիմնավորում: ԳՄՕ 26 հոդված:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ավագյան Գայանե:

Հեռախոս՝ 27-27-60:

Էլ. փոստ՝ gayaneavagyan72@mail.ru

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ ______:

Պատվիրատու՝ <<Թիվ 8 Պոլիկլինիկա>> ՓԲԸ,

# «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ

0033,ք. Երևան
Մարշալ Բաղրամյան պողոտա 51ա
հեռ. 010272760 Էլ. փոստ pol.8@mail.ru


N ___________

«03» դեկտեմբեր 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում
կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Երևանի «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Պոլիկլինիկա) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում N «ՀՀ ԵՑՊ-ՇՀԱՊՁԲ-15/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեով մինչև 2014թ. դեկտեմբերի 15-ը, ժամը 12:00-ն:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գ. Ավագյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Պոլիկլինիկայի շենքում, ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեում, 2014թ.-ի դեկտեմբերի 15-ին, ժամը 12:00-ն:

Գնման առարկա է հանդիսանում Պոլիկլինիկայի կարիքների համար՝ բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերումը:

Պոլիկլինիկայի կարեքների համար՝ բժշկական սարքավորումների և պարագաների մատակարարման (40 չափաբաժիններ) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների

ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) թիվ 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով /անհրաժեշտ է ներկայացնել նաև գնային առաջարկի էլեկտրոնային տարբերակը՝ ցանկալի է EXCEL ծրագրով՝ էլեկտրոնային կրիչով/:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Պոլիկլինիկայի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ pol.8@mail.ru:

Հեռախոս՝ (010) 27 27 60:

Պատվիրատու՝ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ:

Հարգանքով՝

Ա. Հարությունյան